ՀՀ ՊՆ, «ԶԻՆԱՌ» ՓԲԸ
ՀՀ, Երևան, Արարատյան 99

MoD of RA, "ZINAR" CJSC
99 Araratyan, Yerevan, RA

N 179 «06» 08 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

«Զինառ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԶԻՆԱՌ-ԷԱ-ԱՊՁԲ-2024/2 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) (հրավերի հրապարակման ամսաթիվը՝ 2024 թվականի մայիսի 02) մասնակցության հայտ է ներկայացրել Սոֆյա Մանուկյան Բաբկեն Ա/Ձ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Ընկերությունը 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 36-րդ, 38-րդ և 40-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից և վերջինիս շնորվել է պայմանագիր, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, այսինքն՝ Սոֆյա Մանուկյան աբկեն Ա/Ձ-ն «ԶԻՆԱՌ-ԷԱ-ԱՊՁԲ-2024/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, այն է՝ հրաժարվել է պայմանսագիր կնքելուց, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-յուդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑ N 47619
08 08 24

կատանրելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:</u>

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից՝ ուղարկվում է Սոֆյա Մանուկյան աբկեն Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 29.08.2024թ. թիվ 1 որոշումը և անհրաժեշտ տվյալները՝ Ձեր կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Սոֆյա Մանուկյան աբկեն Ա/Ձ	ՀՎՀՀ 47978845	<<			√	29.07.2024թ. «ՁԻՆԱՌ-ԷԱ-ԱՊՁԲ-2024/2»

Առդիր՝ 5 ֆայլ:

«ՁԻՆԱՌ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Ա.ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ